

Խնդիր 2

Խնդրի նկարագիր

WordPress-ի աշխարհում անվտանգության հիմնական խնդիրներից մեկը չթարմացված plugin-ներն են: Նույնիսկ այսօր ավտոմատացումներով հանդերձ, WordPress-ում plugin-ների թարմացումները, դեռևս, իրականացվում են ծրագրավորողների կողմից՝ ձեռքով, թեև plugin-ները ձեռքով թարմացնելը դեռ պատմության ավարտը չէ: Որոշ դեպքերում, թարմացումը կարող է խաթարել կայքի աշխատանքը, ինչն ավելի շատ ջանքեր կպահանջի օգտվողներից:

Օգտատերերին անհրաժեշտ է այնպիսի լուծում, որը կխնայի plugin-ի թարմացման վրա ծախսվող ժամանակը, ինչպես նաև կապահովի անվտանգ լուծում՝ թարմացումներից առաջացած որևէ խնդիրներից խուսափելու համար:

Դուք պետք է գտնեք այնպիսի լուծում, որը կստուգի plugin-ի թարմացումները՝ ավտոմատ կերպով թարմացնելով դրանք և ետ բերել (հետադարձել) թարմացումը, եթե այն հայտնաբերում է խնդիրներ, ինչպես նաև թվարկել բոլոր խնդիրները:

Այլ առանձնահատուկ պահանջներ և նշումներ

- Պատմության աղյուսակ. Ձեր մշակված ծառայությունը պետք է ունենա, այսպես կոչված, կառավարման վահանակ, որտեղ օգտվողը կարող է տեսնել plugin-ի թարմացումների և չեղարկումների (հետադարձումների) ամսաթվերը:

- Ավտոմատ թարմացումից և հետադարձումից հետո ծառայությունը պետք է նշի թարմացման ընթացքում տեղի ունեցած խնդիրները:

- Երբ օգտվողն առաջին անգամ է փորձարկում ծառայությունը, այն պետք է պահանջի լիարժեք մուտք դեպի կայք (FTP, DB), և առանց այս մուտքի անհնար պետք է լինի կատարել ավտոմատ թարմացումները:

- Տեղեկացրեք օգտվողին հաջողված և ձախողված թարմացումների մասին՝ կամ էլեկտրոնային փոստով, կամ կառավարման վահանակում: